ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

15.08.2025թ.

ՈՐՈՇՈՒՄ 648-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 1, ԹԻՎ 2, ԹԻՎ 3, ԹԻՎ 4, ԹԻՎ 5 ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԵՎ ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԸ ՍՊԱՍԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 44-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի 66-րդ կետի 2-րդ ենթակետը, 69-րդ կետը և հաշվի առնելով Գորիս համայնքի վարչական սահմաններում /ներհամայնքային/ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու նպատակով ստեղծված մրցութային հանձնաժողովի 14.08.2025թ. արձանագրությունը,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի թիվ 1, թիվ 2, թիվ 3, թիվ 4, թիվ 5 ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիները սպասարկելու իրավունքը ժամանակավոր հատկացնելու համար ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու նպատակով 2025 թվականի օգոստոսի 27-ին անցկացնել մրցույթ:
2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
3. Մրցութային հանձնաժողովի նախագահին՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում իրականացնել մրցույթի անցկացման աշխատանքները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2025թ. օգոստոսի 15
ք. Գորիս

Հավելված
Գորիս համայնքի ղեկավարի
2025 թվականի օգոստոսի 15-ի թիվ 648-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 1, ԹԻՎ 2, ԹԻՎ 3, ԹԻՎ 4, ԹԻՎ 5 ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԵՎ ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքը հայտարարում է երթուղիները սպասարկելու իրավունքը ժամանակավոր հատկացնելու համար ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու մրցույթ՝ թիվ 1, թիվ 2, թիվ 3, թիվ 4, թիվ 5 ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիների համար։

NN ը/կ	ԵՐԹՈՒՂՈՒ				
	անվանումը և համարը	սկզբնակետը (ավտոկայան, ավտոկայարան, երթակարգա-վարական կետ)	վերջնակետը (ավտոկայան, ավտոկայարան, երթակարգա-վարական կետ)	տեսակը (ավտոբուսային/ միկրոավտոբուսային)	սպասարկման համար պահանջվող ավտոբուսների թիվը (ներառյալ պահուստային ավտոբուսների թիվը)
1.	Թիվ 1	Գուսան Աշոտ փողոցի 26	Գորիսի պետական համալսարան	ավտոբուսային	2
2.	Թիվ 2	Մաշտոցի փողոցի թիվ 14	Արևշատ 2 հասցեի հարակից տարածք	ավտոբուսային /միկրոավտոբուսային	2
3.	Թիվ 3	Անկախության փողոցի թիվ 19	Ակների հրապարակ 1 հասցեի հարակից տարածք	ավտոբուսային	3
4.	Թիվ 4	Անկախության փողոցի թիվ 19	Քարահունջի գյուղապետարանի խաչմերուկ	ավտոբուսային միկրոավտոբուսային	3
5.	Թիվ 5	Ք. Գորիս, Մաշտոցի 14	Խնձորեսկ բնակավայր, 38-րդ փող., թիվ 43 հասցեի հարակից տարածք	միկրոավտոբուսային	2

ՑԱՆԿ

ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Հայտ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշման N2 ձևի:

2.* Ավտոբուսների գրանցման վկայագրեր (ժամանակավոր կտրոն):

3.*Ավտոբուսի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքի առկայությունը հավաստող փաստաթուղթ:

4.* Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ:

5. Հավաքակայանի սեփականության կամ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթեր,գիշերակացով երթուղիների դեպքում վերջնակետում ավտոբուսների կայանումը, պահպանումը, նախաուղերթային տեխնիկական զննումը և վարորդների բուժզննումն ապահովելու նպատակով կնքված պայմանագրեր:

6. Ավտոկայարանային ծառայություն մատուցող կազմակերպության հետ կնքված սպասարկման նախնական, իսկ ներհամայնքային փոխադրումների դեպքում երթակարգավարական ծառայություններ մատուցող կազմակերպության հետ կնքված ծառայություններ մատուցելու նախնական պայմանագիր (գործող պայմանագրի առկայության դեպքում նախնական պայմանագիր չի պահանջվում):

7. Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևոր և ուղեբեռ (եթե սահմանված է) փոխադրավարձը:

Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կողմից սոսնձված և ստորագրված փաթեթով:

Չի ներկայացվում հայտ-պարտավորագիր ներկայացնելու դեպքում:

Մրցույթի անցկացման օրը՝ 2025 թվականի օգոստոսի 27-ին ժամը՝ 11:00-ին, ՀՀ Սյունիքի մարզ, ք. Գորիս, Անկախության 3 հասցեում, համայնքապետարանի նիստերի դահլիճ:

Հայտերն ընդունվում են ՀՀ Սյունիքի մարզ ք. Գորիս, Անկախության 3 հասցեում, համայնքապետարանի վարչական շենքում, ամեն օր՝ ժամը 9 :00 – 17:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետն է՝ 2025 թվականի օգոստոսի 26-ը ժամը 17:00-ն:

Մրցույթն անց է կացվում Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Շվացուցակներին ծանոթանալու համար անցնել հետևյալ հղումներով՝

https://goriscity.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=769

https://goriscity.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=770

https://goriscity.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=771

https://goriscity.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=772

https://goriscity.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=779

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ +374-284-2-25-52 հեռախոսահամարով: